ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորական ուղերձը Հիսուս Քրիստոսի Ծննդյան և Աստվածահայտնության տոնի առթիվ

06.01.2023

Սիրելի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ բոլորիդ Հայաստանում, Արցախում և Սփյուռքում:

Սուրբ ծնունդը սիրո, հույսի, հավատի, բարության և միասնության խորհրդանիշ է, որը քրիստոնյա ժողովուրդը մեծ ցնծությամբ և անսահման հավատով է նշում: Սակայն այս տարի ավետելով Հիսուս Քրիստոսի հայտնությունը՝ բոլորս մեր մտահոգ հայացքներն ենք ուղղում առ Աստված հավատով, որ շուտով վերջ կդրվի արցախահայության առաջ

ծառացած փորձություններին:

Այսօր յուրաքանչյուրս պարտավոր ենք ձեռք մեկնել անմարդկային պայմաններում հայտնված մեր հայրենակիցներին, որոնք օրեր շարունակ գտնվում են շրջափակման մեջ: Մենք՝ հայերս՝ որպես քրիստոնեությունն աշխարհում առաջինը պետական կրոն ընդունած ժողովուրդ, պետք է մեր միասնականությամբ, անսասան հավատով և անկոտրում կամքով քրիստոնյա աշխարհին ցույց տանք իրական քրիստոնեական արժեքները, մեր ազգային որակները, մարդու ցավի նկատմամբ անտարբեր չլինելու կարողությունը, փորձության մեջ հայտնվածին եղբայրաբար ձեռք մեկնելու ունակությունը:

Քրիստոսի հայտնությունը հավատացյալ ժողովրդին ուղղորդում է դեպի լուսավորը, մաքուրն ու ազնիվը, բարին ու մարդկայինը, չափավորությունն ու գոհունակությունը: Այս սրբազան տոնն իր խորհրդով բոլորին դարձնում է հոգատար, միմյանց հանդեպ սրտացավ, ստիպում է մտորել մեր իղձերի, նպատակների մասին, մեզ սովորեցնում է ավելի արժևորել մեր բնօրրանը, ընտանիքն ու հարազատներին, մեր հավատքն ու հոգևոր արժեքները:

Սիրելի՛ արմավիրցիներ, բոլորս մեր հոգիներում ամբարած բազում երազանքներ ունենք: Թող Աստծո զորությամբ և օրհնությամբ բոլորիդ իղձերն ու նպատակներն իրականանան: Մաղթում եմ առողջություն, խաղաղություն ոչ միայն մարդկային հոգիներում, այլև մեր սրբազան հայրենիքում:

Թող մանուկ Հիսուսն իր սուրբ ծննդով զորավիգ լինի մեր հայրենակիցներին, ողջ արցախահայությանը:
Թող հաստատուն խաղաղություն տիրի Հայաստան աշխարհում:

Քրիստոս ծնվեց և հայտնվեց:

Զեզ և մեզ մեծ ավետիս: